

բակուած է Մերփիւր Միւզիփալ Հանդէսին մէջ), բարեբաղդարար զտնուեցան վերջերս Պ. Թորոս Աղատեանի ջանքերով եւ այժմ Կոմիտասս Վարդապետի ուրիշ զրուիքեանց հետ՝ Փարիզի Կոմիտասեան Յանձնաժողովին մօտն են: Այդ ձեռագիրը աշխատութիւնն ալ դժբաղդարար մնացած է այն անաւարտ վիճակին մէջ ուր Կոմիտասս զայն թողած էր 1906ին Փարիզ: Բայց այդ կիսկատար աշխատութիւնը մեծարժէք դործ մըն է եւ պէտք է հրատարակուի:

Այդ թանկագին աշխատութեան հետ, Կոմիտասեան Յանձնաժողովը ստացաւ նաև՝ նորէն Պ. Աղատեանի շնորհիւ՝ հայ երաժշտութեան մասին Կոմիտասս Վարդապետի 1914ին Փարիզի Երաժշտական Միջազգային Համագու-

մարին արտասանած երկու կարեւոր դասախոսութեանց (որոնց յիշատակութիւնը կ'ընէ Պ. Հարաման) Ֆրանսերէն թարգմանութեան ձեռագիրները: Կոմիտասեան Յանձնաժողովը որոշած է այդ երեք աշխատութիւնները հատորի մը մէջ ամփոփել:

Գալով այն լաւատեսութեան զոր Պ. Հարաման կը յայտնէ մեր տարաբաղդ վարպետին բուժելիութեան մասին, մենք ամենքս ալ զայն ունէինք առաջին տարիներուն. բայց ամենէն հմուտ մասնագէտներու ժխտական վճիռները եւ երկար տարիներու ընթացքին իր մտաւոր վիճակին ու եւ է բարւոքման նշան ցոյց չտալը՝ դժբաղդարար այսօր մեզի թոյլ չեն տար այդ յոյսն այլևս պահել: Ա. Զ.

## Պ Ա Յ Ք Ա Ր

Իդձերու անհուն ովկիանոսին  
 Վիհերուն յանձնուած նաւակ մ'է հոգիս ...  
 Զրկանք, անարգանք — քամիներ ցրտին —  
 Ժամանակին հետ կը հարուածեն գիս:

Խաւարն անթափանց կ'իջնէ մերթ շորս դին,  
 Կ'առնէ ուղեցոյց աստղերն ու լուսին.  
 Եւ խորհրդատու կ'ըլլան ինձ մէկէն՝  
 Մահուան հեշտախօս վրիուկներն ամէն:

Բայց անոնք ինձի հին ծանօթներ են,  
 Զեմ խաբուիք իրենց մեղրաբառ լեզուէն.  
 Վառած՝ հաւատքիս ջահերն անհամար,  
 Յոյսերու կանչին կը նաւեմ յամառ:

Քամիներն անսանձ, թո՛ղ մտրակեն գիս ...  
 Շղթայուած վագրի գայրոյթ մը՝ հոգիս  
 Կը բեղմնաւորէ ուժովն ամեհի  
 Հսկայ փոթորկի մ'որ պիտի պայթի ...:

Մ. ՄԱՆՈՒՇԵԱՆ